

## ՄԱՏԵՆԱԻՕՍԱԿԱՆ

«Ոստիկ» ժողովածուն և հայ կանայք:—Մեր կին-գրողները՝  
Մառի Բէյլէյրեան, տ. Կոստանեան, Սիպիլ և այլն:—Ժողովա-  
ծուի բովանդակութիւնը:

Առաջև դրուած է «Հայ կանանց ժողովածու» Ոս-  
տիկը: Կարող ենք այդ առթիւ միմեանց շնորհաւորել՝  
եկաւ վերջապէս և այն ժամանակը, երբ կարելի եղաւ  
յատկապէս կանանց աշխատութիւններից մի ժողովածու  
կազմել և հրատարակել:

Ճիշտ է, գործի ձեռներեցութիւնը, ժողովածուի  
խմբագրութիւնը և հրատարակութիւնը պատկանում են  
տղամարդկանց՝ Հ. Սաթունեանին և Գ. Զանումեանին,  
այնուամենայնիւ ժողովածուն «կանանց» գործ է, ո-  
րովհետև կազմուած է բացառապէս կանանց աշխատու-  
թիւններից: Ժողովածուին մասնակցում են տասնից ա-  
ռելի հայ կանայք. բայց միթէ բոլորն էլ պին-գրողներ»  
են. ամենսեին ոչչ Ընդհակառակը, մեծամասնութիւնը  
միմիայն սոկող՝ է գրական ասպարէզի վերար, Բայց  
մեզ առ այժմ այդ էլ բաւական է. այո, բաւականա-  
նում եմ արձանագրելով, որ տասնից աւելի հայ կանայք  
սիրում են հայ գրականութիւնը և իւրօվսանն ծառա-  
լսում են այդ վսեմ գործին: Եթէ դրանց թիւը օրըստ  
օրէ աւելանալի, մեր գրականութիւնը կարող է բաւա-  
կանին հարստանալ, որովհետեւ, ինչպէս ես նկատել եմ,  
մեր քաղաքակրթուած կանայք և օրիորդները տղամարդ-  
կանցից աւելի տիրապետում են օտար (ուսև և եւրա-  
պական) լեզուներին, ուստի գիտնալով մալրենի լեզուն  
և ցանկութիւն ունենալով զբաղուել— իբրև սիրող—  
գրականութեամբ, հայ կանայք կարող են տալ տեսակ

տեսակ թարգմանութիւններ, կոմպիլիացիաններ և ալլն:  
Խոկ եթէ նրանք ընդ դմին և տաղանդու գրելու շնորհք  
ունին, կարող են,—աւելի զարգացած գրականութեան  
և կուլտուրալի ազգեցութեան ներքոյ—տալ և աւելի  
հասունացած և ժամանակի պահանջին համապատաս-  
խան գրական գործեր:

«Ոստիկ»-ը ապացուց, որ իմ ենթադրութիւնս ճիշտ  
է: Կարգացէք ամբողջ ժողովածուն և դուք իսկոյն կը  
զգաք, «որ բոլոր հեղինակու հիները՝ կրթուած եւրո-  
պացիններ են: Ալդ կողմից ժողովածուն մինչև իսկ միա-  
կողմանի է և թերի: Ալյինքն, կամիմ ասել, որ ժողո-  
վածուն գրեթէ չի կրում այն ազգային գոյնը, առանց  
որի կարող չե գոյութիւն ունենալ ոչ մի գրականու-  
թիւն: Ալդ առթիւ շատ լաւ նկատել է լայտնի քննա-  
դատ Գէորգ Բրանդէսը, ասելով, որ ամեն մի ազգ և  
ժողովուրդ կարող է և պէտք է օգտուի ուրիշների գա-  
ղափարներով, բայց և չպէտք է մոռանալ իր գրակա-  
նութեան միջոցով արտափալեցնել իր ազգային ոգին,  
ուրոյն կերպարանքը, առանձնալատկութիւնը:

Դառնալով «Ոստիկ», ին, մենք տեսնում ենք, որ  
տիկ. Տ. Կոստանեանը խօսում է Օբէրամէրգառուի նշա-  
նաւոր ներկայացումների մասին, տիկ. Թ. Բերբերեանը  
—Փրանսիական մի հետաքրքրական հիմնարկութեան  
մասին, որ. Հ. Մելիք-Հայկազեանը —Մանջուրիայի մա-  
սին, տիկ. Եփ. Պալեանը —մատերիալիզմի մասին, որ.  
Ե. Հ. Լերմօնտովի և նադսօնի մասին և ալլն: Խոկ  
հայոց կենանքը, հայ աշխարհը, հայ հաստատութիւն-  
ները, հայ բանաստեղծները: Պէտք է ենթադրել, որ  
հայ կանալք (կամ գուցէ միմիալն արդ տիկինները) չեն  
հետաքրքրում, կամ առիթ չեն ունեցել ծանօթանալ  
հայ գրականութեամբ, հին ազգային լիշտառակներով.  
չեն ճանապարհորդել այն վալրերում, ուր ամեն մի  
տեղ հող, ամես մի աւերակ «հին-հին դարուց լիշտառակ»  
է և անխօս պատկերացնում է մեր առաջ թէ մեր ան-  
ցեալ կեանքը և թէ կուլտուրան: Խոստավանենք, որ  
մեր կանալք ստանում են բաւարար կրթութիւն, բայց  
ոչ միշտ համապատասխան այն շրջանին, ժողովրդին,  
որի մէջ նրանք ապրում են: Ժամանակ է ուշադրու-

թիւն դալ ձնել ալդ տարօրինակ միակողմանիութեան վերայ, որը գնում է մեր կանանց, քոլրերին և աղջիկներին ընդհանուր հոսանքից դուրս։ Ալդ կողմից Տաճկաստանի և Արևելքի հալ կանալք շատ աւելի բարձր են մերոնցից և արժանի են մերոնց համար օրինակ լինելու։

Հէսց «Ռսակից» մէջ էլ գեղեցիկ հալ լեզուն — Պօլսուհուն է պատկանում, հալ ինքնուրոյն ստեղծագործեան և կեանքի «Հոս» — նրանց գիտութիւններից է փչում։ Այս մանաւանդ հետաքրքրական է այն պատճառով, որ, ինչպէս արդէն ասացի, ժողովածուի մասնակցողների մէջ խառն են պրօֆէսսիօնալ և սիրող գրողները. դրանք, այսպէս ասած, մեր հալ կանանց ինտէլլիգէնցիալի «սերան են կազմում, ուստի դրանցով կարելի է շափել ուրիշներին, դրանց հաւաքական գործը այն «մաքսիմումն» է, որ մենք կարող ենք սպասել հալ կանանցից գրական ասպարիզի վերայ։

Ժողովածուի բովանդակութիւնը հարուստ չէ, բայց հետաքրքրական է։ Բանաստեղծութիւն, հրապարակախօսութիւն, վէպ, ճանապարհորդական նկարագրութիւն, գիտութիւն, մինչև իսկ քննադատութիւն. ամեն մի ճիշդի պատկանեալ նմուշներ կան։ Խօսենք նախ պրօֆէսսիօնալ կամ գրական ասպարիզի վերալ արդէն ծանօթ հին գրողների մասին։ Դրանց մէջ ամենաժողովրդական» անունն է Մառի Պէլլէրեան, թէպէտ և տիկ. Տիրուհի Կոստանեանը շատ աւելի վաստակաւոր է։

Կանանց օրգան «Արտէմիսի» խմբագիր-հրատարակիչ Մառի Պէլլէրեանը իսկական գրական է։ Նա թէ շնորհք ունի գրելու և թէ պաշար. նա ունի ժուռնալիստի բոլոր լատկութիւնները՝ գրում է ազատ ու համարձակ, պարզ լեզուով, բազմատեսակ նիւթերի մասին և ժամանակակից պահանջներին համապատասխան։ Նրա գրիչը նուրբ է, զգացմունքը — անկեղծ, նա կարճ ժամանակուալ մէջ անուն վաստակեց, թէպէտ և գործում է աննպաստ պալմաններում։ Նա ինչ որ վաստակեց՝ իր տաղանդի շնորհօվն է վաստակել։ Ժողովածուի մէջն էլ նա առաջին ջութակն է ածում՝ նրան է պատկանում ժողովածուի ոգին որոշող առաջնորդող լօգուածը, որը միևնույն ժամանակ և կանանց հրովարտակ է

ներկալացնում։ Նա խօսում է—և պէտք է խոստովանել շատ գեղեցիկ և ոգևորուած է խօսում—հանրային կարծիքի մասին, որը Տամովկէսի սրի նման միշտ կախուած է կնոջ գլխին։ Համոզում է կանանց մոռանալ ալդ հանրութեան կարծիքը, բարձր լինել նրանից, վարուել ամէն մի գործում խղճի ցուցմունքի համեմատ։

Նաև մար գրայն մեր իղչի աղջին, նոյն իսկ եթէ աշխարհ մը բամբառներ ու մաղադանք թափեն մը գրայ արհամարհներ շարամիտ պարուաներները՝ որ մը ականջները կը վիրաւորեն։ Իդու միշտ ոչ մարդիտ, գեղեցիկը, բարին կը թելադրէ մարդու։ Բարդականի որոշ ու Շշմարիտ օրէնքները, ըսկըսակները ծանօթ են մզի։ ադուն նուիրական են և ուուր պէտք է թանյաւէս մզի համար։ Բարձրացնենք մը սեռը այն ստոր վիճակէն որոյ ենթարկուած է դարերէ ի վեր, հզօր զարկ մը ստորդ մանաւորապէս մը սեմին գաստիարակսթեան։ որը ժժրազարար շատ թերի է, և աւելի երեսոթական քան իրական բնութիւն մը ունի։ Շանչնանք մը արժանապատութիւնը. քաջ ըմբռնենք մեր բարձր կոչման գիտակցութիւնը, դործեն առողջ և ամուր համոզութերէ առաջնորդուած մարդն և մոռնանք հանրութեան կարծիքը»

Հանրութեան կարծիքը գուցէ այն ֆօկուսն է, որի մէջ կենդրոնանում են այն բոլոր նշմարելի և աներեսոյթ բարոյական կապանքները, որով կաշկանդուուծ է կինը ընդհանրապէս, և հայ կինը առաւելապէս։ Հանրային փտած կարծիքի դէմ կոիւ մղելը պատկառելի և պատուաբեր գործ է. և որովհետև «ոչ մի բան պատմութեան մէջ չէ գրւում, այլ ամէն ինչ առնելում է»—ուստի և կանայք պէտք է առնեն. դա նրանց սուրբ գործն է, պարտականութիւնն է իրանց բնութեան և ապագայ սերնդների առաջ։ Մ. Պէլլէրեան մզում է ալդ կոիւը և նա մենակ չէ։ միւս հայ կինդրողներն էլ նրան օժանդակում են։ Ահա և «Ոստիկի» մէջ զետեղուած Զանազան Մեհրաբեանցի հոգեբանական էտիւդը (Տանջուածի բողոքը), և եշխանուհի Ս. Վ. Արզութեան-Երկայնաբազուկի «Երկու նամակը», և Խմէնթօլի «Հողոքը»—խուլ կոիւներ են կանանց ազատութեան համար—ընդգէմ «Հանրային կարծիքի» և այլ «շղթաների», որոնցով դարերէ ի վեր կինը կապուած կաշկանդուած է ի հաճոյս աւելի ուժեղ սեռի։ Զեմ կարող ասել, որ ժողովածուի մէջ զետեղուած վեպական և բանաստեղծական մասերը շատ լաջող լինին. կանանց հարցի պաշտպանութեան գործու-

մըն էլ մենք ունինք աւելի լազողները։ Անշուշտ տիկ։ Տիւսաբ իր վէպերով, Սունդուկեան և Շիրվանզագէ իր դրամաներով և բազմաթիւ մեր և տաճկահայ երիտասարդ վիպասանները մեծապէս նպաստել են կանանց հարցի մեր մէջ զարգանալուն և կանանց վիճակի վրայ ընդհանուրի ուշքը դարձնուելուն։ Շատերը կվեճեն իմ ալս կարծիքի հետ, բայց փաստերը ցոյց են տալիս, որ ամենու ըստք գրականութիւնը ազնուացնում է բարքերը ինչու չկարծել, որ նոյնը կարող է տեղի ունենալ և մեր մէջ։

«Աստիկ»-ում տպուած վիպական գրուածքներից ամենալաջողը Սիպիլի «Պօռւն» է։ Պօլսեցիք ալդ տեսակ գրուածքները «նորավէպ» են անուանում (Նովէլլալի մտքով ել. և ի) մենք՝ վիպակ, վէպիկ, պատկեր, պատմուածք, Եթէ ինքը խօսքը «պատմուածքը» փոքր ի շատէ շնորհքով բառ լիներ, կարելի էր նրան գործածել բայց «պատմուածք» բառը խիստ շինծու բառ է և կարծես մարսելի չէ։ Ալդ տեսակ գրուածքներին աւելի յարմարուում է «պատկեր» անունը։

Պատկերի հեղինակը գեղեցիկ գոյներով նկարագրում է մի սովորեալ ողբերգութիւն, կնոջ պճնասիրութեան հետեանք. սակայն դէպքը շատ հազուագիւտ է, ուստի և տպաւորութեան ոլժը ալնքան մեծ չէ, որքան որ կարող էր լինել նոյն տաղանդով գրուած ուրիշ պատկերից։ Սիպիլը մեր տաղանդաւոր կին գրողներից մէկն է։ Նրա գրչի արտադրութիւների հետ մենք պատահում ենք—ահա մի քանի տարի է—Պօլսի զանազան լրագրների և ամսագրների մէջ։ Նորերս իմ ձեռս ընկաւ նրա բանաստեղծութիւնների ժողովածուն «Յոլքեր» անունով։ Սիպիլը—նրա խսկական անունն է Զապէլ Զ. Ասատուր—եղերեզու է։ Նա երգում է իր արամագրութիւնը, սրտի յուզերը, զգացմունքները և միշտ բնութիւնը։ Բոլոր ոտանաւորների վերալ կարծես վուալ է՝ ձգուած՝ ինձ վրայ նրանք պլազմազող կանթելի տպաւորութիւն թողին։ Ոչ մի աշքի ընկնող—արտաքինով կտմ ներքին բովանդակութեամբ—ոտանաւոր ես նրա ժողովածուի մէջ չգտայ, այլ ընդհակառակը տեսալ

զարմանալի միաժեսակութիւն՝ ձեմի, ոճի, զգացմունքի, տրամադրութեան, խօսքերի։ Դա բաւականին տաղտկալի է անշուշտ, սակայն ընորոշ է հեղինակի մասին և, ըստ երեսովթիւն, անկեղծ է։ իսկ անկեղծութիւնը տաղանդի անհրաժեշտ պայմաններից մէկն է։ Սիպիլ սիրում է ընութիւնը և բնութեան մէջ գտնում է իր ցաւերի մխիթարանքը, իր ցաւերի, որոնք որքան էլ խոր լինեն—չեն ստիպում հեղինակին բողոքել և կըռուելու նա միայն գանգատուում է և դիմանում է, համբերում է յուսերով լի... Խսկոյն հալ կինը երեսում է այստեղ։

Տեղ-տեղ ոտանաւորները Դուրեանի քնարն են լի-շեցնում, բայց ոչ այնքան բովանդակութեամբ, որքան արտաքին ձեռով. օրինակ՝

«Լոյսի փունջ մը, շող շեղերու կուռ հեսկեն,  
Հորեգոնէն վար հուր և բոց կը թափէ...»

կամ՝

«Շողին, ցօղին լոյս ծիծաղէն արծաթի...»

Սակայն չկայ Դուրեանի աւիւնը, անհուն յոռետեսութիւնը, խորունկութիւնը։ Սիպիլի ոտանաւորների վրայ նկատում է նաև Փրանսիական «Պառնասական» կոչուող գրական ուղղութեան ազդեցութիւնը։ Մեղանակին հեղինակը դիմում է սիմբոլների և — ինչպէս տեսանք բերուած նմուշներից — բառախաղութիւնների։ Այդ էլ ևնոր գրականութեան ազդեցութիւնն է։

Կրկին «Ուստիկանին վերագառնալուց առաջ նկատեմ այստեղ, որ Պօլսահայ արդի գրականութեան մէջ բացի Սիպիլից կան ալլ ևս մի քանի կին-գրողներ, որոնցից աւելի աշքի ընկնողն է թէ իր բեղմնաւորութեամբ և թէ շնորհքով Մառի Ցովհաննիսեանը։ Նա զետեղում է «Մասիս»-ում ոտանաւորներ, նորավեպեր, «Աղջկան» մը օրագրէն քաղուածա և կնոջ հոգեբանութիւնը նկարագրող մի էտիւդ ևալլն։ Նրան կարելի է կարգանց ձանձրոյթի։

Դառնանք էլի մեր ժողովածուին։ Այստեղ մենք տեսնում ենք օր. Գ. Կալալեանի և Զ. Ալեանաքիլի բանաստեղծութիւնները, որոնք նոյնպէս կին գրողներ են,

քայլց ըստ իս սկսնակներ, Յամենալն գեպս նրանց ու-  
տանաւորները մեր շատ «բանաստեղծների» ոտանա-  
ւորներից լաւ են:

Անուն վաստակած կին-գրող է, թէպէտ և գըլ-  
խաւորապէս թարգմանչուհի—տիկ. Տիրուհի Կոստա-  
նեանը. Տիկ. Մարգարտի (նրա կեղծ անունը) գրական  
գործունչութիւնը շատ համեստ է, գործունչութեան  
շրջանակը շատ նեղ է: Բայց այնուամենալիւ նա ար-  
դիւնաւէտ է: Նու թարգմանում և հրատարակում է  
ժողովրդի և երեխաների համար և իբրև զարգացած  
և շրջահալեաց կին—շատ լաւ ընտրութիւն է անում  
նիւթերի՝ նրանք թէ բազմազան են և թէ խորիմաստ:  
Նրա ինքնուրոյն գրուածքների թիւը փոքր է, բայց  
նրանք միշտ հետաքրքրական են և որոշ պակաս լրաց-  
նողներ են: «Ուստիկ»-ի մէջ նա ծանօթացնում է հայ  
ընթերցողներին այն նշանաւոր ներկալացումների հետ,  
որ կոչում են «Passionspiel» կամ «Le Mysterie de la  
passion»—այսինքն «Զարչարանաց խաղ»: Եւրոպայի մի  
քանի վալերում տրում են արդ տեսակ խաղեր, բայց  
ամենաշանաւորն է Բաւարիայի Օբէրամէրգաու գիւղի  
խողը, որին ներկալ է եղել և հայ հեղինակը:

Ես ինքս տեսել եմ նոյնպիսի խաղ Զուիցարիայի  
Ձելցախ գիւղում և կաշխատեմ «Լումար-ի միւս հա-  
մարներից մէկում ծանօթացնել իմ տպաւորութիւնների  
հետ, նոյնպէս և արդ խաղերի ժագման հետ:

Տիկ. Կոստանեանը պատմում է իր տեսած խաղի  
մասին պստիերօքն և մանրամասն. խորհուրդ ենք  
տալիս կարդալ:

«Ուստիկ» ի մնացեալ գրուածքներից—որոնք պատկա-  
նում են ոչ կին-գրողներին, այլ «սիրողներին»—շատ  
հետաքրքրական է տիկ. Թագուհի Քերբերեանի յօդուա-  
ծը՝ «Ուտոպիայի և իրականութեան մէջտեղը», որը  
Փրանսիական մի հետաքրքրական հիմնարկութեան  
նկարագրութիւնն է: Հիմնարկութեան անունը Փա-  
միլիստէս է և ներկալացնում է ընկերական գոր-  
ծարան, որ ամէն մի գործ անող, (բանուոր թէ  
կտուավարիչ) միենոյն ժամանակ և զործարանի

«բաժնէտէրն» է։ Սա մի սօցիալտկան հիմնարկութիւնն է, ուր որոշ չափով իրագործում է աշխատանքի և կապիտալի հաւասարութիւնը և համերաշխ գործունէութիւնը արդարացի հիմունքների վերաբ Ալյստեղի բանուորները համեմատաբար բարւոք վիճակի մէջ են, առողջ են, ապահովուած են և տղատ են թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ «Խամիլիստէս»-ի հիմնադիրը նախկին բանուոր հարստացած և գաղափարական մի մարդ է եղել, որ 1880 թ. ժամանակակից սօցիալիստների և ուտօպիստների ծրագրով՝ հիմնում է սի հանրափարական ընկերութիւն «Խամիլիստէս» անունով և նրան է յանձնում իր բոլոր ունեցած-չունեցածը, միլիոնաւոր կարողութիւնը։ Գործարանը գնում է յաջող, գործերը ծաղկեալ վիճակի մէջ են, Խամիլիստէսի անդամները և նրանց ընտանիքները երջանիկ են և բաւական Յօդուածը կարդալուց յետու ամեն մարդ հարց է տալիս՝ միթէ նոյնը կարելի չէ ստեղծել աւելի մեծ և յայն ծաւալով, ընդհանուրք համար... Անշուշտ կարելի է և կպատասխանենք մենք — բայց դեռ ժամանակը չի եկել։

Ալյսպէս է կանանց առաջին հաւաքական լուման մեր գրականութեան գանձանակին և չի կարելի ասել, որ անլաջող լինի. միայն արտաքինը մի քիչ անպահոյն է։

Եւ որովհետեւ մտադրութիւն կալ երկրորդ հատորն էլ հրատարակել, ուստի ներելի է ցանկութիւն յարտնել, որ խմբագիր-հրատարակիչները ջանք թափէին կանանց նոր ոլժեր էլ գրաւել իրանց ձեռնարկութեան յաջողութեան համար, ուշադրութիւն դարձնէին ազգային մասի վրայ, աւելի գեղեցիկ արտաքին տալին ժողովածուին և վերջապէս եթէ կարելի է զետեղէին մեր կին-գըրողների պատկերները և կենսագրական-քննտդատական տեղեկութիւններ նրանց սասին։

Ես սիրում եմ «ժողովածուներ»։ սրանք ցոյց են տարիս, որ մեր հասարակութեան մէջ դեռ մարած չէ իսպառ սէրը դէպի գրականութիւնը և հասարակական գործունէութիւնը։